Հարցաթերթ

Աշխարհագրություն առարկայի օլիմպիադայի մարզային (քաղաքային) փուլի – 2016 թ.

/տևողությունը՝ 150 րոպե/

11-12-րդ դասարաններ

1. **Աշխարհի բնակչության ազգային կազմի վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ**……1,5 միավոր
   1) Բնակչության ազգային և կրոնական կազմերի սահմանները մշտապես համընկնում են:
   2) Բնակչության ազգային և լեզվագրական կազմերը աշխարհի առանձին տարածաշրջաններում չեն համընկնում:
   3) Ազգի հատկանիշներից են լեզվի, հոգևոր մշակույթի և հոգեբանական խառնվածքի ընդհանրությունը:
   4) Ազգն ունի ազգությանը բնորոշ հատկանիշներ, սակայն սոցիալտնտեսական զարգացման ավելի ցածր աստիճանի վրա է, քան ազգությունը:
   5) Այն երևույթը, երբ ամրապնդվում է ազգի լեզվական և մշակութային ընդհանրությունը, երբ ազգը դառնում է ավելի միասնական ու ամրակուռ, կոչվում է ազգերի միաձուլում:
   6) Աշխարհում խոշորագույն լեզվաընտանիքը հնդեվրոպականն է, իսկ ամենատարածված լեզուն՝ չինարենը:

2. **Հայկական լեռնաշխարհի վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ**……1,5 միավոր
   1) Միջնաշխարհում արևափայլի տևողությունը ավելի մեծ է, քան եզրային լեռնաշղթաների արտաքին լանջերին:
   2) Հայկական լեռնաշխարհի հարավում, ձմռանը գիշերվա տևողությունն ավելի կարճ է, քան հյուսիսում:
   3) Լեռնաշխարհի հարավում, հունիսի 22-ին, ցերեկվա տևողությունն ավելի երկար է, քան հյուսիսային բևեռում:
   4) Լեռնաշխարհի հարավում, դեկտեմբերի 22-ին, գիշերվա տևողությունն ավելի երկար է, քան հարավային բևեռում:
   5) Լեռնաշխարհի հյուսիսում, սեպտեմբերի 23-ին, գիշերվա և ցերեկվա տևողությունը հավասար է:
   6) Լեռնաշխարհի հյուսիսում, հունիսի 22-ին, գիշերվա տևողությունը ավելի երկար է, քան հյուսիսային բևեռում:

3. **Սահմանել «բնական պայմաններ» և «բնական ռեսուրսներ» հասկացությունները: Բերել օրինակներ**……2 միավոր

4. **Լճային գոգավորությունների ո՞ր տեսակներն են բնորոշ՝ ա) Ավստրալիային, բ) Սկանդինավիային, գ) հրաբխային շրջաններին և դ) Արևելաաֆրիկական մեծ բեկվածքին: Յուրաքանչյուրից բերել երկուական օրինակ**……2 միավոր

5. **Տրված պետությունները դասավորել բամբակի համախառն բերքի աճման կարգով**……...1 միավոր
   1) Բրազիլիա
   2) Հնդկաստան
   3) Թուրքիա
   4) Չինաստան
6. **Գրել այն տարածաշրջանների համարները, որոնք խաղողագործության մեջ մասնագիտացված չեն**……1 միավոր
   1) Սևանի ավազան
   2) Արարատյան դաշտ
   3) Շիրակի դաշտ
   4) Արփայի հովիտ
   5) ՀՀ հյուսիս-արևելք
   6) Զանգեզուրի հարավ
   7) Լոռվա սարահարթ
   8) Եղվարդի սարավանդ
7. **Որոշ տվյալներով Հայկական լեռնաշխարհը զբաղեցնում է 370.000 կմ^2 մակերես, որից 100.000 կմ^2-ը զբաղեցնում է Հայկական հրաբխային բարձրավանդակը:**
   1. **Որքա՞ն մակերես կզբաղեցնի Հայկական լեռնաշխարհը 1:500.000 մասշտաբի քարտեզում**……..1 միավոր
   2. **Որքա՞ն մակերես կզբաղեցնի Հայկական հրաբխային բարձրավանդակը 1:2.000.000 մասշտաբի քարտեզում**……..…..1 միավոր

8. **Որքա՞ն էլեկտրաէներգիա (կվտ/ժամ) կարելի է ստանալ 2 տոննա նավթի (ջերմային գործակիցը՝ 1,5) և 5 տոննա գորշ ածխի այրումից (ջերմային գործակիցը՝ 0,5)**……2 միավոր

9. **Ընտրել միջերկրածովային կլիմա ունեցող 4 քաղաքները**……1 միավոր
   Յաունդե, Լոս-Անջելես, Լիսաբոն, Պերտ, Բուենոս-Այրես, Պալերմո, Քեյփթաուն, Դակար, Բանգկոկ, Օդեսա:

10. **Ընտրել 4 պետություններ, որոնց բնակիչները գերազանցապես պատկանում են հինդեվրոպական լեզվաընտանիքին, բայց դավանում են մահմեդականություն**……..……..1 միավոր
    Մակեդոնիա, Եմեն, Բոսնիա և Հերցեգովինա, Տաջիկստան, Լիբանան, Մոնտե Նեգրո, Պակիստան, Մյանմա, Բանգլադեշ, Ինդոնեզիա:

11. **Ընդերքի ռեսուրսների արդյունավետ օգտագործում է.** ……0,5 միավոր
    1) հանքավայրերում աղքատ պաշարներով թափոնների կուտակումը
    2) պոչամբարներում չկորզված նյութերի կուտակումը
    3) ընդերքի ռեսուրսների համալիր յուրացումը
    4) հանքարդյունահանման հին ավանդական մեթոդների վերականգնումը:

12. **ԼՂՀ-ի վերաբերյալ ո՞ր պնդումն է սխալ**……..0,5 միավոր
    1) մեկ շնչին բաժին ընկնող վարելահողերի մակերեսը մի քանի անգամ գերազանցում է ՀՀ համապատասխան ցուցանիշը,
    2) համեմատաբար մեղմ ու խոնավ կլիմայի պատճառով ոռոգման խնդիրը հանրապետությունում սուր չէ,
    3) բազմամյա տնկարկների ընդհանուր տարածքը կազմում է շուրջ 13 հազ. հա,
    4) ոռոգվող հողատարածությունների ընդհանուր մակերեսը կազմում է շուրջ 130 հազ. հա

13. **Ընտրել կլիմայի տիպերի և դրանց բնորոշ գծերի տրված համապատասխանության ճիշտ շարքը**……1 միավոր

1. ծովային կլիմա	ա. բնորոշ են ջերմաստիճանի մեծ տատանումները և տարվա ընթացքում անհավասարաչափ բաշխված քիչ տեղումները
2. մուսսոնային կլիմա	բ. բնորոշ են ջերմաստիճանի փոքր տատանումները և ամբողջ տարին թափվող առատ տեղումները
3. ցամաքային կլիմա	գ. բնորոշ են մեղմ ու խոնավ ձմեռները և տաք ու չոր ամառները
4. միջերկրածովյան կլիմա	դ. բնորոշ են ցուրտ ու չոր ձմեռները և տաք ու խոնավ ամառները

14. **Ո՞րն է «բնական զոնա-բնորոշ կենդանատեսակներ» համապատասխանության ճիշտ շարքը**……...1 միավոր

1. պրերիա	ա. յագուար, գետակինճ
2. տունդրա	բ. գորշ արջ, որմզդեղն
3. տայգա	գ. բիզոն, գայլ
4. խոնավ արևադարձային անտառ	դ. բևեռաղվես, կարիբու

1) 1-գ, 2-ա, 3-բ, 4-դ
2) 1-բ, 2-գ, 3-դ, 4-ա
3) 1-ա, 2-բ, 3-դ, 4-գ
4) 1-գ, 2-դ, 3-բ, 4-ա

15. 1) Ինչո՞վ է բացատրվում Կարմիր ծովի ջրի մեծ աղիությունը:
2) Ո՞րն է ՀՀ ամենամարդաշատ գոտին ըստ բարձրության և ինչու՞……..……2 միավոր